Հաշմանդամության Վերանում Տեղեկություններ

Բովանդակություն

Որքա՞ն հաճախ կվերանայվի իմ առողջական վիճակը:	2
Ինչպե՞ս ես կծանուցվեմ վերանայման վերաբերյալ:	2
Ի՞նչ է տեղի ունենում վերանայման ընթացքում:	2
Ո՞վ կկայացնի հաշմանդամության վերաբերյալ որոշումը:	2
Ինչպե՞ս նրանք կկայացնեն որոշումը:	2
Ի՞նչ կպատահի եթե ես չհամաձայնվեմ որոշման հետ:	3
Ի՞նչ հանգամանքների ներքո կդադարեցվեն նպաստները:	3
Ի՞նչ կպատահի, եթե ես փորձեմ աշխատել:	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Եթե Դուք ստանում եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության կամ Հավելյալ Ապահովության Եկամտի (Supplemental Security Income (SSI)) նպաստներ, ապա, ժամանակ առ ժամանակ, մենք կվերանայենք Ձեր ընթացիկ առողջական վիճակը, որպեսզի համոզվենք, որ Դուք շարունակում եք պահպանել Ձեր հաշմանդամության իրավասությունը:

Սովորաբար, եթե Ձեր առողջական վիճակը չի բարելավվել, կամ եթե Ձեր հաշմանդամությունը դեռևս խոչընդոտում է Ձեզ աշխատելուց, ապա Դուք կշարունակեք ստանալ Ձեր նպաստները:

Մեր վերանայման գործընթացը հնարավորություն է տալիս Ձեզ ցույց տալու, որ Դուք դեռևս պահպանել եք Ձեր հաշմանդամության իրավասությունը և ապահովում է, որ Ձեր նպաստները չեն դադարեցվում սխալմունքով: Մենք ամբողջությամբ կգնահատենք Ձեր վիճակի վերաբերյալ առկա բորոր փաստարկները: Եթե Դուք ունեք մեկից ավելի հաշմանդամության հանգեցնող վիճակ, մենք կդիտարկենք Ձեր բոլոր խեղումների միասնական ազդեցությունը Ձեր աշխատելու կարողության վրա:

Ստորև ներկայացված են Սոցիալական Ապահովության հաշմանդամության վերանայումների մասին ամենահաճախ տրվող հարցերից որոշները:

Որքա՞ն հաճախ կվերանայվի իմ առողջական վիճակը:

Վերանայման հաճախությունը կախված է Ձեր առողջական վիճակի բնույթից և լրջությունից, և թե արդյո՞ք այն ակնկալվում է բարելավվել:

- Եթե ակնկալվում է բարելավում, ապա Ձեր առաջին վերանայումը սովորաբար կանցկացվի Ձեր հաշմանդամ դառնալու օրվանից սկսած վեցից 18 ամիս անց:
- Եթե բարելավումը հնարավոր է, սակայն չի կարող կանխատեսվել, ապա մենք կվերանայենք Ձեր գործը յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: և
- Եթե բարելավում չի ակնկալվում; ապա մենք կվերանայենք Ձեր գործը յուրաքանչյուր յոթ տարին մեկ անգամ:

Ինչպե՞ս ես կծանուցվեմ վերանայման վերաբերյալ:

Երբ մենք որոշենք, որ անհրաժեշտ է ամբողջական բժշկական վերանայում, մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ խնդրելով Ձեզ գալ Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Ի՞նչ է տեղի ունենում վերանայման ընթացքում:

Վերանայման ընթացքում, մենք կհարցնենք, թե ինչպես է Ձեր առողջական վիճակը անդրադառնում Ձեզ վրա և թե արդյո՞ք այն բարելավվել է: Մենք կխնդրենք Ձեզ հետ բերել Ձեր բժիշկների անունները, հասցեները, և հեռախոսահամարները, ինչպես նաև հիվանդի գրանցման համարները ցանկացած հիվանդանոցից և այլ բժշկական աղբյուրներից, որոնք զբաղվել են Ձեր բուժումով՝ մեր կողմից Ձեզ հետ վերջին անգամ կապ հաստատելուց ի վեր: Եթե Դուք աշխատել եք այն ժամանակից ի վեր, երբ դիմել եք հաշմանդամության նպաստների համար, կամ Ձեր վերջին վերանայումից հետո, ապա մեզ նաև անհրաժեշտ կլինի Ձեր աշխատանքի անցնելու ամսաթվերի, Ձեր կողմից ստացված վճարների և Ձեր կողմից կատարվող աշխատանքի բնույթի:

Ո՞վ կկայացնի հաշմանդամության վերաբերյալ որոշումը:

Մենք կուղարկենք Ձեր գործը Ձեր նահանգի Հաշմանդամությունը Որոշող Ծառայությունների (Disability Determination Services) գործակալություն: Այդ գործակալությունը կայացնում է հաշմանդամության վերաբերյալ որոշումներ Սոցիալական Ապահովության համար: Հաշմանդամության գծով փորձառու քննիչը կպահանջի ներկայացնել Ձեր բժիշկների և բուժման համար Ձեր կողմից այցելած այլ հաստատությունների բժշկական զեկույցները: Քննիչը և բժշկական խորհրդատուն, որոնք միասին են աշխատում որպես թիմ, մանրակրկիտորեն կդիտարկեն Ձեր գործով ստացված ամբողջական տեղեկատվությունը, և այնուհետև որոշում կկայացնեն:

Ինչպե՞ս նրանք կկայացնեն որոշումը:

Դեպքերի մեծամասնությունում, որոշումը հիմնված կլինի Ձեր բժիշկներից, հիվանդանոցներից կամ այլ բժշկական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Սակայն, եթե ժշկական փաստարկները ամբողջական կամ ընթացիկ չեն, ապա Ձեզ կխնդրեն անցնել հատուկ զննություն, որն անվճար կլինի Ձեզ համար: Դուք գրավոր ծանուցում կստանաք տվյալ զննության օրվա, ժամի և վայրի մասին:

(շրջել)

Ի՞նչ կպատահի եթե ես չհամաձայնվեմ որոշման հետ:

Դուք կարող եք բողոքարկել որոշումը, եթե համաձայն չեք դրա հետ: Դա նշանակում է, որ Դուք կարող եք խնդրել մեզ կրկին դիտարկելու Ձեր գործը, որպեսզի համոզված լինենք, որ մեր որոշումը ճշմարիտ էր: Գոյություն ունի բողոքարկելու չորս մակարդակ, և սովորաբար Դուք ունեք 60 օր՝ մի մակարդակից մյուսը բողոքարկելու համար: Չորս մակարդակները հետևյալն են՝

- **Կրկնակի Վերանայում (Reconsideration).** Ձեր գործը անկախ կերպով դիտարկվում է այն մարդկանց կողմից, որոնք որևէ մասնակցություն չեն ունեցել սկզբնական որոշման մեջ: Դուք կարող եք ներկայանալ Ձեր հաշմանդմության դեպքի լսման գործակալին, որը որոշում կկայացնի Ձեր բողոքի վերաբերյալ:
- **Լսում (Hearing).** Եթե Դուք համաձայն չեք կրկնակի վերանայման որոշման հետ, ապա Դուք կարող եք լսում պահանջել վարչարարական գործերով դատավորի առջև:
- **Վերաքննիչ Խորհուրդ (Appeals Council).** Եթե Դուք համաձայն չեք վարչարարական գործերով դատավորի որոշման հետ, ապա Դուք կարող եք որոշման վերանայում պահանջել Վերաքննիչ Խորհրդի կողմից:
- **Դաշնային դատարան (Federal Court).** Եթե Դուք համաձայն չեք Վերաքննիչ Խորհրդի որոշման հետ, կամ եթե Վերաքննիչ Խորհուրդը որոշում է չվերանայել Ձեր գործը, ապա Դուք կարող եք քաղաքացիական հայց ներկայացնել դաշնային դատարան:

Ի՞նչ հանգամանքների ներքո կդադարեցվեն նպաստները:

Սովորաբար, կանխիկ գումարով ստացվող նպաստները կդադարեցվեն, միայն եթե փաստարկները ցույց տան, որ Ձեր առողջական վիճակը բարելավվել է, և որ Դուք կարող եք աշխատել կանոնավոր կերպով: Ձեր կանխիկ գումարով ստացվող նպաստները կշարունակվեն, այնքան ժամանակ որքան Ձեր վիճակը չի բարելավվի, և Դուք ի վիճակի չեկ լինի աշխատելու:

Ի՞նչ կպատահի, եթե ես փորձեմ աշխատել:

Սոցիալական Ապահովությունը ունի մի քանի հատուկ կանոն, որոնք կարող են օգնել, եթե Դուք ցանկանում եք աշխատել:

Եթե Դուք ստանում եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստներ, և Դուք զեկուցել եկ Ձեր աշխտանքային գործնեությունը, ապա Դուք կարող եք ունենալ անսահմանապակ հասույթ փորձաշրջանի ժամանակահատվածի համար՝ մինչև ինը ամիս տվողությամբ (պարտադիր չէ որ լինի հաջորդական) և դեռևս ստանաք ամբողջական նպաստները: Այլ կանոնները թույլ են տալիս, որպեսզի կանխիկ նպաստները և Medicare –ը շարունակվեն, մինչդեռ Դուք փորձում եք կանոնավոր աշխատանքի անցնել:

Եթե Դուք ստանում եք SSI հաշմանդամության վճարներ, Դուք կարող եք շարունակել ստանալ ամսական վճարները մինչդեռ աշխատում եք, այնքան ժամանակ, որքան որ Ձեր եկամուտը և միջոցները շարունակում են մնալ որոշակի սահմանաչափից ներքև: Եթե Ձեր կանխիկ վճարները դադարեցվում են, քանի որ Ձեր ընդհանուր եկամուտը գերազանցում է SSI սահմանաչափերը, Դուք կարող եք դեռևս իրավասու լինել Medicaid-ի համար:

Մենք ունեք այլ ծրագրեր, որոնք կարող են օգնել Ձեզ աշխատանքային ծախսերի, վերապատրաստության, և վերականգնման հարցում: Սոցիալական Ապահովության Ձեր գրասենյակից լրացուցիչ տեղեկատվություն խնդրեք աշխատել ցանկացող հաշմանդամ անձանց համար հատուկ կանոնների վերաբերյալ:

(շրջել)

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-10068-AM | July 2017
Հաշմանդամության Վերանում Տեղեկություններ
What You Need To Know: Reviewing Your Disability (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: